Անգլերենի 1-ին և 2-րդ դասարանի խմբակի ծրագիր

Ծրագիրը նախատեսված է տարրական դասարանների առաջին դասարանի սովորողների համար, որի **նպատակն** է՝ **սովորողների մոտ պատկերացում ստեղծել անգլերենի, անգլիական մշակույթի, վերաբերյալ՝ անգլերենով հաղորդակցման պարզ կառույցների, բազային բառապաշարի ներմուծման ազգային և ուսուցանվող լեզվի երկրի մշակույթի հանդեպ հետաքրքրության սերմանման, ինչպես նաև նախապես ընտրված թեմաների միջոցով:**

Ներկայացված նյութերը նախատեսված են իրականացնել շաբաթական երկու անգամ 64 ժամ տևողությամբ, ինչը թույլ կտա առաջին դասարանի սովորողների մոտ զարգացնել հետևյալ **վերջնարդյուքները.**

- ունենա օտար լեզվով հաղորդակցական կարողություններ,
- կիրառի թեմային և հաղորդակցական իրադրությանը համապատասխան մատչելի բառապաշար, արտասանություն,
- հասկանա և օգտագործի ծանոթ և պարզ նախադասություններ՝ կարողանա ներկայանալ, ներկայացնել իր շրջապատի մարդկանց՝ հաղորդելով պարզ տեղեկություններ,
  - անվանի ընտանիքի անդամներին,
  - հաշվի մինչև տասը,
  - ասի իր տարիքը,
  - անվանի մրգերն ու բանջարեղենը, նշում դրանց բնորոշ հատկությունները,
  - անվանի մրգատու ծառերը, նշի, թե դրանք որտեղ են աճում,
  - առանձնացնի ընտանի, վայրի կենդանիներին և անվանում,
  - իմանա կենդանիների ապրելու վայրը (farm, zoo),
  - նշի շարժում արտահայտող որոշ բառեր,
  - նկարագրի, թե յուրաքանչյուր տարվա եղանակին ինչ է տեղի ունենում,

- առանձնացնի ամառային և ձմեռային հագուստը,
- նշի, թե ինչ է սիրում ուտել, ինչ՝ ոչ,
- նկարագրի տան կառուցվածքային մասերը,

- կարողանա հաղորդակցվել բանավոր՝ գործածելով պարզագույն կառույցներ:

Ծրագրի իրականացումը կնպաստի սովորողի

- առաջընթացի ինքնագնահատման հմտությունների զարգացմանը՝ գտնի իր սխալները և քայլեր անի դրանք ինքնուրույն կամ աջակցությամբ ուղղելու համար,
- ինքնուրույն սովորելու հմտությունների, ստեղծագործական ունակությունների և ինքնակազմակերպման կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը,
- ուսման նկատմամբ հետաքրքրության ցուցաբերելուն:

Ներկայացված նյութերը կառուցված են փոխներգործուն (ինտերակտիվ) մեթոդների կիրառմամբ, որոնք դրդում են երեխաներին լինել ակտիվ դերում, կատարել հարցադրումներ, ընկալել դիմացինի խոսքը, ծավալել երկխոսություն: Նյութը երեխաներին մատուցվում է խաղերի, հաղորդակցական իրավիճակների կազմակերպման, ենթախմբային աշխատանքների իրականացման միջոցով, որոնք մատչելի են դարձնում ոչ միայն ներկայացվող լեզվանյութի յուրացումը, այլ նաև նպաստում են լեզվական կարողությունների արդյունավետ ձևավորմանը, քանի որ աշխատանքի նման կազմակերպումը երեխաների մեջ առաջացնում է խոսքարտահայտման ներքին ցանկություն, հանդիսանում դրդապատճառ օտար լեզվով սեփական մտքերն արտահայտելու համար:

Դասերը ներկայացված են աստիճանական բարդացման սկզբունքով: Յուրաքանչյուր թեմայի համար ներկայացված է նպատակը, կիրառվող դիդակտիկ պարագաները, կազմակերպման ընթացքը, աղյուսակի տեսքով առանձնացված են տվյալ պարապմունքի ընթացքում կիրառվող բառերն ու արտահայտությունները՝ անցած բառանյութի կրկնությամբ և նորի ներկայացմամբ:

Դասերի ընթացքում երեխաները սովորում են նաև փոքրիկ ոտանավորներ, երգեր, տեսաձայագրություններ (կից ներկաացված են), որոնք նպաստում են նրանց կողմից օտարալեզու բառերի, արտահայտությունների, նախադասությունների դյուրին յուրացմանը: Յուրաքանչյուր պարապմունքի ընթացքում նախատեսված է ֆիզկուլտ րոպե, որոնք հնարավորություն են տալիս երեխաներին լիցքաթափվել: Դրանց ընթացքում երեխաներին տրվող պարզ հրահանգները նույնպես խթանում են բառապաշարի հարստացմանը, խոսքի ընկալմանը:

Նվազագույն բառապշարի ներաացում տարբեր թեմաներով

1-ին դասարանի ծրագիր

№	Themes	Vocabulary	Sentenses	Hours
1.	Me and My Family	father, mother, grandmother, grandfather, sister, brother uncle, aunt my family	This is my family. I have a sister... I have two brothers... I don't have an uncle...	4
2.	1-10 Numbers	one, two, three, four, five, six, seven, eight, nine, ten fingers, four apples, eight plums, one pear	How old are you? I am five. Give me four... Put ten... How many . . . ? "I have ten fingers"	4
3.	Animals	bear, hare, lion, tiger, cat, dog wolf, monkey, cow, pig, sheep zoo, farm	This is a zoo. This is a farm. Glad to see you, too.	4
4.	Frutes	apple, pear, peach, banana, plum, cherry, apricot, grapes banana, orange	This is a pear. This is an apple.	4
5.	Vegetables	potato, tomato,	This is a cabbage. It is	4

		cucumber, carrot, cabbage, onion, pepper	white. What colour is it? – It is white.	
6.	Garden	garden, tree, fruit tree, apple-tree, peach-tree, cherry-tree, etc.	-Is this a garden? -Yes, it is. It is an apple-tree…	4
7.	Movement	get up, wash hands and face, have breakfast, comb hair, brush teeth, go, come, stand up, sit down	Wash your hands and face. Brush your teeth. Comb your hair.	4
8.	Seasons	season, spring, summer, autumn, winter warm, hot, cool, cold, run, swim, walk, play snowballs, play football	What can you do in spring…? I can play football in spring… What can you do in winter…? I can play snowballs in winter…	4
9.	Nature	snowy, rainy, sunny, windy	How are you? What season is it? Summer is bright, hot and sunny. We can swim in summer. Give me…, please. Take it	4
10.	Cloths	T-shirt, hat, cap, jeans, shorts, shoes, dress, blouse, coat, hat, scarf, mitten, boots	I wear … in cold …. warm weather.	4
11.	Means of Transportation	a car, a bus, a train, a bike, a plane, a ship, a motorbike, a tram, a boat, a	Please, give me … I want a … Here you are. Thank you.	4

		helicopter		
12.	Service Set	dishes - plate, cup, spoon, fork, knife, tea cup, coffee cup, glass	(a) one plate, two cups . . . *I wash the spoon* . . .	4
13.	Foods	bread, cheese, milk, pizza, popcorn, butter, egg, tea, ice-cream,	Do you like . . .? Yes, I do. No, I don't. I like ... I don't like ...	4
14.	Toys	a doll, a ball, a toy-car, a toy-train, a teddy bear, a toy-dog, a toy-cat, a doll's house, a star, a toy-monkey, a toy-hare	What is this? This is a . . . I have a . . .	4
15.	My Home	house, roof, door, floor, ceiling, window, wall rooms - a living-room, a dining-room, a bedroom, a kitchen, a bathroom	What colour is the roof? -The roof is red. This is a house. There are many rooms in the house.	4
16.	Furniture	a table, a chair, a sofa, a TV-set, a bed, a wardrobe, a cooker, a cupboard, a sink, a mirror there is, there are	What is there in the bathroom? There is a sink in the bathroom. Where is the wardrobe? The wardrobe is in the bedroom.	4

2-րդ դասարանի ծրագիր

№	Themes	Vocabulary	Sentenses	Hours
1.	Me and My Family	father, mother, grandmother, grandfather,	I am . . . Hello, my name is . . . What is your name?	4

	Letters Bb and Pp	sister, brother uncle, aunt my family	Nice to meet you. I have a mother . . . This is my father. This is my family. *I have a mother, a father...* *I have a sister and a brother.* *I don't have an aunt...* *This is my grandmother, this is my grandfather.* *I love my family.*	
2.	Colors and 1-10 Numbers Letters Mm and Nn	one, two, three, four, five, six, seven, eight, nine, ten fingers, four apples, eight plums, one pear	It is green . . . I have one blue ball. Sarah has two white balls. Is it red? Yes, it is. No, it isn't. How many . . . ?	4
3.	Animals Letters Ee and Ll	bear, hare, lion, tiger, cat, dog wolf, monkey, cow, pig, sheep zoo, farm	This is a dog. It is white. Is it black? No, it isn't. Yes, it is.	4
4.	Fruts Letters Aa and Ss	apple, pear, peach, banana, plum, cherry, apricot, grapes banana, orange	Sarah has a green apple. Sarah has a peach. It is yellow. It is ... Is it red? No, it isn't. Yes, it is. What colour is it? Thank you, teacher!	4
5.	Vegetables Letters Dd and Tt	potato, tomato, cucumber, carrot, cabbage, onion, pepper	This is a tomato. It is red. This is a cabbage. It is white. What colour is it? – It is white.	4
6.	Garden	garden, tree, fruit	-Is this a garden?	4

	Letters Ii and Jj	tree, apple-tree, peach-tree, cherry-tree, etc.	-Yes, it is. It is an apple-tree...	
7.	Movement Letters Hh and Oo	get up, wash hands and face, have breakfast, comb hair, brush teeth, go, come, stand up, sit down	One, two jump, Three, four stand still, Five, six dance, Seven, eight stand still, Nine, ten let's start again.	4
8.	Seasons Letters Gg and Kk	season, spring, summer, autumn, winter warm, hot, cool, cold, run, swim, walk, play snowballs, play football	Hello ... I am glad to see you. It is summer. Summer is bright What colour is it? Is winter cold? . . . Yes, it is. No, it isn't. What can you do in spring...? I can play football in spring... What can you do in winter...? I can play snowballs in winter...	4
9.	Nature Letters Rr and Uu	snowy, rainy, sunny, windy	How are you? What season is it? Summer is bright, hot and sunny. We can swim in summer. Give me..., please. Take it	4
10.	Cloths Letters Ff and Cc	T-shirt, hat, cap, jeans, shorts, shoes, dress, blouse, coat, hat, scarf, mitten, boots	What colour is the dress? The dress is red. It is a red dress.	4
11.	Means of	a car, a bus, a	Please, give me ...	4

	Transportation Letters Ww and Yy	train, a bike, a plane, a ship, a motorbike, a tram, a boat, a helicopter	I want a … Here you are. Thank you.	
12.	Service Set Letters Zz and Vv	dishes - plate, cup, spoon, fork, knife, tea cup, coffee cup, glass	This is a plate. It is yellow. Give me the green cup, please…	4
13.	Foods Letters Qq and Xx	bread, cheese, milk, pizza, popcorn, butter, egg, tea, ice-cream,	Do you like . . .? Yes, I do. No, I don't. I like … I don't like …	4
14.	Toys	a doll, a ball, a toy-car, a toy-train, a teddy bear, a toy-dog, a toy-cat, a doll's house, a star, a toy-monkey, a toy-hare	This . . . is for you. Thank you. What do you want? I want a…	4
15.	My Home	house, roof, door, floor, ceiling, window, wall rooms - a living-room, a dining-room, a bedroom, a kitchen, a bathroom	What colour is the roof? -The roof is red. This is a house. There are many rooms in the house.	4
16.	Furniture	a table, a chair, a sofa, a TV-set, a bed, a wardrobe, a cooker, a cupboard, a sink, a mirror there is, there are	What is there in the bathroom? There is a sink in the bathroom. Where is the wardrobe? The wardrobe is in the bedroom.	4

Աշխատանքի կազմակերպման ձևերը

Օտար լեզվից իրականացվող աշխատանքները կարելի է կազմակերպել անհատական, զույգերով, ենթախմբային, խմբային ձևերով:

Անհատական աշխատանք

Յուրաքանչյուր երեխայի տրվում է անհատական աշխատանք, օրինակ, երբ երեխաներից ամեն մեկը պետք է տրված նկարները դասավորի տրամաբանական հաջորդականությամբ և ներկայացնի: Դրանք կարող են լինել տարվա եղանակները, օրվա մասերը, դրանց ընթացքում կատարվող գործողություններ պատկերող նկարներ: Կարելի է նաև աշխատանքն իրականացնել բաշխիչ նյութերի միջոցով, երբ յուրաքանչյուր երեխա կատարում է իրեն տրված առաջադրանքը և ներկայացնում:

Աշխատանք ենթախմբերով

Ենթախմբային աշխատանքներն առավել նպաստում են լեզվական, հաղորդակցական կարողությունների ձևավորմանը, քանի որ դրանց ընթացքում ստեղծված իրավիճակները դրդում են երեխաներին օտար լեզվով արտահայտել մտքերը, ցանկությունները: Ուստի, անգլերենի մասնագետի խնդիրն է այնպես կազմակերպել ենթախմբային աշխատանքները, որպեսզի դրանք մղեն երեխաներին խոսքարտահայտման:

Ենթախմբային աշխատանքների կատարման ժամանակ զարգանում են խնդիրներ լուծելու երեխաների կարողությունները, ձևավորվում են հաղորդակցական հմտություններ, երեխաները սովորում են միմյանցից, բարձրանում է նրանց պատասխանատվության զգացումը:

Խմբային աշխատանքներ

Խմբային աշխատանքները նույնպես խրախուսվում են այս տարիքի սովորողների համար, որը հնարավորություն է տալիս զարգացնելու նաև սոցիալական հմտություններ՝ միմյանց լսելու, կարծիք հայտնելու, դիմացինի կարծիքը հարգելու, ուշադրությունը կենտրոնացնելու կարողությունները:

Հեքիաթապատում (Storytelling)

Օտար լեզվի յուրացման գործում խմբային պատմում մեթոդի կիրառումն ունի մեծ նշանակություն, քանի որ երեխաներն ակտիվորեն ներգրավվում են գործողությունների մեջ՝ արտահայտելով հերոսներից որևէ մեկի խոսքը: Երեխաները շատ են սիրում լսել

հեքիաթներ և հետաքրքիր պատմվածքներ: Հետևապես, կարևորվում է ճիշտ հեքիաթի կամ պատմվածքի ընտրությունը:

Պատմվածքը կամ հեքիաթը ներկայացնելիս կարևոր է նկարների կամ ժեստերի կիրառումը՝ բովանդակության ընկալումը և որոշ բառերի ու արտահայտությունների վերարտադրումը մատչելի դարձնելու համար: Նպատակահարմար է երեխաներին ներկայացնել ծանոթ հեքիաթներ, օրինակ՝ «Մոխրոտիկը», «Կարմիր գլխարկը», «Հենզելն ու Գրետելը» և այլն: Ցանկալի է վերցնել դրանց հարմարեցված մատչելի տարբերակները: Ընտրված հեքիաթները կամ պատմվածքները պետք է հարուստ լինեն երկխոսություններով և նկարներով:

Այս մեթոդը ենթադրում է փոխներգործություն անգլերենի մասնագետի և երեխաների միջև: Այն իրականացվում է փուլերով և պահանջում է երկար ժամանակ: Երեխաների կողմից համապատասխան բառապաշարի, լեզվական երևույթների մասին պատկերացումների ձևավորումից հետո կարել է դրանք բեմականացնել:

<u>Հինգ հուշում վերոնշյալ մեթոդի արդյունավետ իրականացման համար</u>

Նորարարություն. ստեղծել յուրահատուկ լեզու, ձայն կամ մարմնի լեզու: Պետք է ստեղծագործաբար ներկայացնել իրադարձությունների հաջորդականությունը:

Խոսքի արտահայտչականությունը. պետք է խոսել երեխաներին հաճելի և ոչ միապաղաղ ձայնով, որը կօգնի մտքի ընկալմանը: Ուստի, կարևորվում է ձայնի բարձրության մերթ ընդ մերթ փոփոխությունը. խոսել բարձրաձայն, ցածրաձայն կամ շշուկով՝ ըստ անհրաժեշտության, տարբերակել հերոսների ձայները:

Ժեստերի կամ մարմնի լեզուն. կարևորվում է ոչ խոսքային հաղորդակցական միջոցների կիրառումը՝ նյութի իմաստն առավել ընկալելի դարձնելու համար. ժեստեր, դեմքի տարբեր արտահայտություններ: Նպատակահարմար է ներկայացված բառերին, արտահայտություններին հաջորդի համապատասխան գործողությունների ցուցադրումը, օրինակ՝ թակել դուռը, քայլել սենյակով, քնելու գործողությունը կամ այլ գործողություններ, որոնք ներկայացված են պատմվածքում կամ հեքիաթում:

Ուշադրության կենտրոնացումը. նախադպրոցական տարիքի երեխաների ուշադրության կենտրոնացման համար կարևորվում են համապատասխան սյուժետային նկարների կիրառումը, որոնք նպաստում են մտքերի հերթականությունը ներկայացնելուն:

Կերպարանացում. պետք է կերպարների երկխոսությունները բեմականացնել՝ դրանք ունկնդրողների համար հասկանալի դարձնելու համար:

Ամբողջական ֆիզիկական պատասխան (Total Physical Response)

Այս մեթոդը մշակվել է դոկտոր Ջեյմս Աշերի կողմից: Այն հիմնված է մայրենի լեզուն յուրացնելու սկզբունքների վրա: Մեծահասակը որևէ գործողություն կատարելու ցուցում է տալիս, իսկ երեխան կատարում է համապատասխան գործողությունը: Օրինակ՝ բացի՛ր դուռը կամ տո՛ւր ինձ գնդակը, իսկ երեխան կատարում է նշված գործողությունները: Եթե անգամ երեխան տվյալ օտար լեզվով չի խոսում, նա ընկալում է ասվածի իմաստը, հնչյունները և կաղապարները, ապա վերարտադրում դրանք ինքնաբուխ: Նույն մեթոդը կիրառվում է նաև խմբասենյակում: Օտար լեզվի մասնագետն արտասանում է բառը կամ արտահայտությունը և կատարում համապատասխան գործողությունը: Այնուհետև հրահանգ է տալիս, և բոլոր երեխաները կատարում են տվյալ գործողությունը: Մեթոդը կիրառվում է այնքան ժամանակ, մինչև երեխաները սկսում են խոսել, արտասանել նշված բառերը կամ արտահայտությունները:

Մեթոդը նպատակահարմար է կիրառել գործողություն ցույց տվող բառեր, առանձին արտահայտություններ, հրամայական նախադասություններ ներկայացնելու և խմբային պատմության մեթոդի կիրառման ժամանակ:

Մեթոդի կիրառումն արդյունավետ է, քանի որ այն՝

- ✓ զվարճալի է, և երեխաները հաճույք են ստանում նշված գործողությունները կատարելիս,
- ✓ օգնում է մտապահել բառերն ու արտահայտությունները,
- ✓ արդյունավետ է դպրոցական այս տարիքի երեխաների հետ աշխատելու սկզբնական փուլի համար,
- ✓ կիրառելի է մեծ և փոքր խմբերի, ինչպես նաև տարբեր կարողություններ ունեցող երեխաների խմբերում,
- ✓ չի պահանջում նախապատրաստական աշխատանք կամ ռեսուրսներ:

1. Էլեկտրոնային աղբյուրներ

https://soundcloud.com/eslkidstuff/the-morning-routines-song

https://supersimple.com/song/whats-your-name/

https://www.youtube.com/watch?v=Q8wF9sU1dII

https://www.youtube.com/watch?v=Im3rIc5b7MA

https://www.youtube.com/watch?reload=9&v=5IhmAI0jgSg

https://www.youtube.com/watch?v=kEzJvdhRKcA

Օգտագործված գրականություն

1. Կ. Պողոսյան. Մ. Ամիրաղյան, Անգլերենը փոքրիկների համար (4-6 տարեկաններ), Ձեռնարկ անգլերենի մասնագետի համար, «Մարի հրատարակչություն», Երևան, 2021
2. K. Poghosyan. Summer Workbook, Grade 3. «Մարի հրատարակչություն», Երևան, 2020
3. K. Poghosyan. Summer Workbook, Grade 4. «Մարի հրատարակչություն», Երևան, 2020
4. «Օտար լեզուներ» բնագավառի 2-12-րդ դասարանների չափորոշիչ